ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

<<ՍՄ-ՄՀ-ԳՀԽԾՁԲ-24/04>> ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի կասեցում

Ք. Մեղրի 28 մարտի 2024թ.
Ժամը 12:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Մկրտիչ Մկրտչյան
Անդամներ՝ Տիգրանուհի Դավթյան, Մանե Մելքումյան, Մարիաննա Արզումանյան

Քարտուղար՝ Շուշան Սարգսյան

<< ՍՄ-ՄՀ-ԳՀԽԾՁԲ-24/04>> ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Ընդունել ի գիտություն, որ.

1.1 << ՍՄ-ՄՀ-ԳՀԽԾՁԲ-24/04>> ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի հրավերով նախատեսված կարգով և սահմանված ժամկետում WWW.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ անձիք.

<<	Մասնակցի անվանումը/անունը/	Էլ. հասցե
1	«Շինպրոգրես» ՓԲԸ	shinprogres@mail.ru
2	«ՄԱՐՏԵՎ»ՍՊԸ	badal2010@mail.ru

2. Տեղեկություններ՝ հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ

2.1 Նվազագույն գին առաջարկած («Շինպրոգրես» ՓԲԸ-ը) մասնակցի կողմից ոչ գնային պայմանները բավարարող փաստաթղթերում արձանագրվել է անհամապատասխանություն՝

2.1.1 Դիմում հայտարարության (հավելված N1) վերջին պարբերության մեջ **եթե մասնակիցը հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ** իրական շահառուների վերաբերյալ կայքէջի հղումն է տեղադրում և չի ներկայացնում հայտարարագիր՝ հավելված 1.2:

2.1.2 Բացակայում է Հրավերի Մաս 1-ինի գլուխ 2-րդում նշված 2.2.2 **Մասնագիտական փորձառությունը:**

ա.Մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են **համարվում շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցված լինելը:**

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենները: (Անհրաժեշտության դեպքում՝ Պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար մասնակցից կարող է պահանջվել տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը):

2.1.3 Բացակայում է Հրավերի Մաս 1-ինի գլուխ 2-րդում նշված 2.2.3.**«Աշխատանքային ռեսուրսները:**

«Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը՝ ա. աշխատակազմում, **յուրաքանչյուր չափաբաժնի մասով** պետք է ներգրավված լինի առնվազն 1 հոգուց բաղկացած ինժեներատեխնիկական անձնակազմ՝ առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով: բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով որպես որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, ազգանունը	որակավորումը	աշխատանքային փորձը		գործատուի անվանումը
		Ժամանակա հատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5

1.				
2.				
..				

Ընդ որում աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար Մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները.

Մասնակցի կողմից ներկայացված հայտում ոչ գնային պայմանների բացակայությունը չի հանդիսանում հայտի մերժման հիմք, ոչ գնային պայմաններին տրված գնահատականը ազդում է մասնակիցներին տրվող ընդհանուր գնահատականի վրա:

Եթե մասնակցի կողմից ներկայացված ոչ գնային պայմանները բավարարող փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Անհամապատասխանությունները շտկելու դեպքում մասնակցի ոչ գնային պայմանները կգնահատվեն հրավերով սահմանված կարգով, հակառակ դեպքում ոչ գնային պայմանները կգնահատվեն զրո:

2.1.4 Բացակայում է շինարարության որակի տեխնիկական հսկողություն ըստ քաղաքաշինական հետևյալ ոլորտի՝ 1)բնակելի հասարակական և արտադրական 2) էներգետիկ լիցենզիաները:

2.2 Ելնելով վերոգրյալից գնահատող հանձնաժողովը որոշեց համակարգի միջոցով տեղեկացնել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը համաձայն << կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 41-րդ կետի:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

3. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2024 թվականի մարտի 29-ին ժամը 12:00-ի,ք.Մեղրի Զ.Անդրանիկի 2 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

Նախագահ՝ _____ Մկրտիչ Մկրտչյան

Անդամներ՝ _____ Տիգրանուհի Դավթյան

_____ Մանե Մելքումյան

_____ Մարիաննա Արզումանյան

Քարտուղար՝ _____ Շուշան Սարգսյան